«Այբ» ավագ դպրոց

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ 2019 թ., ապրիլ
Տևողություն՝ 1 ժամ 15 րոպե

«Այբ» ավագ դպրոց

Հավելյալ նյութ՝ *Պատասխանների գրքույկ*

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Պետք է պատասխանել **բոլոր** հարցերին:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:
Հարցերի միավորների ընդհանուր քանակը 32 է:

Այս փաստաթուղթը բաղկացած է 8 տպագիր էջից:

©«Այբ» ավագ դպրոց

Ուշադրությո՛ւն. առանց շտապելու կարդացեք և ուսումնասիրեք բերված աղբյուրները: Պատասխանեք հարցերին՝ հիմնավորելով տրված աղբյուրներում առկա վկայություններով:

Առաջադրանք 1 (6 միավոր)

Ստորև տրված հատվածի հեղինակը հույն նշանավոր պատմիչ Պլուտարքոսն է:

Երբ արքան ներկայացավ Պոմպեոսին, հանեց իր խույրը, այն զորավարի ոտքերի առաջ դնելու մտադրությամբ և, ինչը առավել ամոթալի էր, ուզեց նրա առաջ ծնրադրել: Պոմպեոսը, սակայն, կանխեց նրան, բռնեց արքայի աջը և նրան քաշեց դեպի իրեն: Հետո նստեցրեց իր կողքին, իսկ որդուն՝ մյուս կողքին: Նա արքային հայտարարեց, որ նրա նախկին բոլոր դժբախտությունների համար մեղավոր է Լուկուլլոսը, որը նրանից վերցրել է Ասորիքը, Փյունիկիան, Կիլիկիան, Գալատիան և Ծոփքը: Իսկ այն հողերը, որոնք դեռ մնացել են իրեն, թող ինքը տիրի՝ հռոմայեցիներին հասցրած վիրավորանքի համար նրանց վճարելով ութ հազար տաղանդ, իսկ Ծոփքում կթագավորի նրա որդին: Արքան այս պայմանները սիրով ընդունեց, և այնժամ հռոմայեցիները նրան արքայավայել ողջունեցին:

Հարց Ա

Ո՞վ էր պատմագրի կողմից հիշատակվող հայոց արքան: Ինչու՞ էր նա հայտնվել Պոմպեոսի ճամբարում:

Պլուտարքոսի կողմից հիշատակվող հայոց արքան Տիգրան II Մեծն (Ք. ա. 95-55 թթ.) է: Դեռևս Ք. ա. 69 թ. սկսված հայ-հռոմեական պատերազմի ավարտական փուլում Ք. ա. 66 թվականին, հռոմեական զորավար Գնեոս Պոմպեոսի զորքը հայտնվել էր մայրաքաղաք Արտաշատի մատույցներում: Տիգրանը կորցրել էր իր արևելամիջերկրածովյան տիրույթները (Ասորիքը, Փյունիկիան, Կիլիկիան, Գալատիան), գրավվել էր մայրաքաղաք Տիգրանակերտը: Ստեղծված իրադրության պայմաններում հնարավորինս ձեռնտու պայմաններով հաշտություն կնքելու նպատակով Տիգրան Մեծը մեկնեց Պոմպեոսի ճամբար՝ բանակցություններ վարելու նրա հետ:

Հարց Բ

Ի՞նչ հետևանքներ ունեցավ հայոց արքայի քայլը: Ի՞նչ եք կարծում, դրանք դրակա՞ն, թե՞ բացասական հետևանքներ էին: Հիմնավորե՛ք պատասխանը աղբյուրի տվյալներով և ձեր գիտելիքներով:

Պոմպեոսի բանակում Տիգրանը հանեց իր խույրն ու անգամ փորձեց ծնկի գալ Պոմպեոսի առաջ, սակայն փոխարենը արժանացավ արքայավայել ընդունելության: Բանակցությունների արդյունքում Ք. ա. 66 թ. սեպտեմբերին կնքված Արտաշատի պայմանագրով Տիգրան II-ը պահպանեց Մեծ Հայքի թագավորությունը՝ կորցնելով իր ստեղծած տերության մեծ մասը: Մեծ Հայքից անկախացավ Ծոփքի թագավորությունը, որտեղ թագավորելու էր Տիգրան Կրտսերը:

Պատասխանի երկրորդ մասը կախված է աշակերտի անհատական կարծիքից և գնահատվելու է՝ ըստ հիմնավորվածության աստիճանի:

©«Այբ» ավագ դպրոց

Առաջադրանք 2 (7 միավոր)

Ստորև տրված **են** հատվածներ հայ պատմագետների աշխատություններից:

Աղբյուր 1

Սյունիքում և Արցախում մելիքները, թեև ընդունել էին նվաճողների գերիշխանությունը, բայց ներքին կառավարման հարցերում գործելու լիակատար ինքնուրույնություն, նաև՝ զորք պահելու իրավունք ունեին: Մյուս կողմից՝ Արցախի մելիքները, լինելով պարսից պաշտոնյաներ, իրենց իշխանության մեջ հաստատված են Իրանի շահերի հրովարտակներով: Դիզակի գավառի տիրակալ Մելիք Եգանը նշանակվել է մելիքությունների ընդհանուր կառավարիչ:

Վահրամ Բալայան

«Արցախահայ ազատագրական պայքարի բովանդակությունը

17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1813 թ.», 2013 թ.

Աղբյուր 2

Ուշ միջնադարում Մեծ Հայքի հյուսիսարևելյան մի հատվածում վերածնվեց հայկական մի նոր պետական միավոր՝ Հինգ մելիքություններից կազմված նահանգը՝ կենտրոն ունենալով Տող ավանը: Այն ճանաչվեց որպես հայկական ինքնավար մի երկիր, որի սահմանները ձգվում էին Գանձակի մատույցներից մինչև Արաքս գետը: Այդ կապակցությամբ Մելիք Եգանի պալատի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը պատմում է. «. . . Նադիր զորեղ թագավորը իր զորքով եկավ, երկիրը օսմանլուի* ձեռքից առավ: Նրան էլ այնքան ծառայություն մատուցեցի, որ նա քրիստոնյա ազգի հինգ մահալների* վրա ինձ որպես խան և բեկլարբեկի* կարգեց, շնորհ արեց»:

Թաթուլ Հակոբյան

«Կանաչ ու սև. Արցախյան օրագիր», 2013 թ.

օսմանլու – օսմանյան թուրք

մահալ – գավառ Պարսկաստանում

բեկլարբեկ – պարսկական նահանգի կառավարիչ

Հարց Ա

Ո՞ր վարչական միավորի մասին են խոսում աղբյուրները: Ե՞րբ և ինչպե՞ս է այն հիմնադրվել:

Աղբյուրներում հիշատակվող վարչական միավորը Խամսայի մելիքություններն են: Ինչպես երևում է մելիք Եգանի արձանագրությունից, հայերը աջակցություն էին ցուցաբերել օսմանյան թուրքերի դեմ պարսիկների պայքարին, իսկ պարսկական զորքերի հրամանատարը՝ Նադիրը, բարիդրացիական հարաբերություններ էր հաստատել հայ մելիքների ու հայկական եկեղեցու հետ: Հայերը մասնակցել էին 1735 թվականի Եղվարդի ճակատամարտին՝ նպաստելով պարսկական զորքերի հաղթանակին: 1736 թ. հռչակվելով պարսից շահ՝ Նադիրը Արցախի հինգ մելիքությունները առանձնացրեց Գանձակի խանությունից և ստեղծեց վարչական առանձին միավոր՝ Խամսայի (թարգմանաբար՝ հինգ) մելիքությունները, որոնց կառավարումը հանձնվեց Դիզակի մելիք Եգանին:

©«Այբ» ավագ դպրոց

Հարց Բ

Ի՞նչ իրավունքներով էր օժտված ստեղծված վարչական միավորը: Օգտվելով աղբյուրների տեղեկություններից և ձեր գիտելիքներից՝ փորձեք նկարագրել դրա կառավարման համակարգը:

Խամսայի մելիքները օժտված էին ներքին կատարյալ ինքնավարությամբ, ունեին անգամ սեփական զորք պահելու իրավունք: Մելիքների իշխանությունը ժառանգական էր: Հայերն ունեին նաև հոգևոր ինքնավարություն՝ ի դեմս Գանձասարի կաթողիկոսության: Պատահական չէ, որ պատմագետները Խամսան որակում են հայկական «պետական միավոր», կիսանկախ Արցախ:

Մյուս կողմից՝ մելիքները ենթակա էին պարսկական շահին և իրենց գործունեության համար հաշվետու էին նրան: Արցախի մելիքները մասնակցում էին նաև շահի ձեռնարկած ռազմական գործողություններին և ըստ էության՝ պարսկական պաշտոնյաներ էին:

Առաջադրանք 3 (6 միավոր)

Ստորև տրված հատվածի հեղինակը պետական հայտնի գործիչ Սիմոն Վրացյանն է:

Հայոց Ազգային խորհուրդը Հայաստանի անկախությունը չէ, որ հայտարարել է: Հակառակը, անկախության հարցը նյութ եղավ երկար և հուզումնալից վիճաբանության, բայց Ազգային խորհուրդը սիրտ չարեց հարևանների օրինակին հետևելու. ոչ ոքի բերանին չէր գալիս «անկախություն» բառը: Ձայների մեծամասնությամբ մերժելով անկախության հայտարարության առաջարկը, որ գալիս էր Դաշնակցության հատվածից, Ազգային խորհուրդը մայիսի 30-ին իրեն հայտարարեց «հայկական գավառների գերագույն իշխանություն»:

Հարց Ա

Ի՞նչ իրադարձության մասին է խոսում հեղինակը: Ե՞րբ է այն տեղի ունեցել և որտե՞ղ:

Աղբյուրում հիշատակվող իրադարձությունը Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադրումն է: Անդրկովկասի Դաշնային Հանրապետության փլուզումից երկու օր անց՝ 1918 թ. մայիսի 28-ին, Հայոց ազգային խորհուրդը Թիֆլիսում իրեն հռչակեց «հայկական գավառների գերագույն իշխանություն»:

Հարց Բ

Օգտագործելով աղբյուրի տեղեկությունները և ձեր գիտելիքները՝ բացատրեք, թե ինչ պայմաններում կատարվեց հիշատակվող իրադարձությունը:

Հայաստանի անկախության հռչակումը կատարվեց թուրքական սաստկացող վտանգի պայմաններում: Մայիսյան հերոսամարտերը դեռևս ընթացքի մեջ էին: Մյուս կողմից՝ Բաթումի բանակցություններում թուրքերը վերջնագիր էին ներկայացրել: Անդրկովկասյան հանրապետության փլուզման պայմաններում, երբ Վրաստանն ու Ադրբեջանը հաջորդաբար հայտարարել էին անկախանալու մասին, Հայոց ազգային խորհուրդն այլևս չէր կարող խուսափել անկախության հռչակումից: Չնայած ընդհանուր բացասական վերաբերմունքին՝ մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի անկախությունը, որը տվյալ պահին պատմական անհրաժեշտություն էր:

©«Այբ» ավագ դպրոց

Առաջադրանք 4 (6 միավոր)

Ստորև մեջբերված է քաղվածք Օտտո Բիսմարկի 1862 թ. սեպտեմբերի 30-ի խորհրդարանական ելույթից: Կարդացեք այն և պատասխանեք տրված հարցերին՝ օգտագործելով ինչպես աղբյուրի տեղեկությունները, այնպես էլ թեմայի վերաբերյալ ձեր գիտելիքները:

Մենք չափազանց տաքարյուն ենք, նախընտրել ենք կրել մի զրահ, որը շատ մեծ է մեր փոքր մարմնի համար, բայց այժմ մենք պետք է օգտագործենք այն: Գերմանիան հայացքը հառել է Պրուսիային ոչ թե նրա լիբերալիզմի, այլ նրա հզորության պատճառով: Պրուսիան պետք է կենտրոնացնի իր ուժերը՝ պատրաստվելով հարմար առիթի, որը մի քանի անգամ արդեն անտեսվել է: Պրուսիայի սահմանները, ըստ Վիեննայի վեհաժողովի [1814-15], բարենպաստ չեն առողջ, կենսական պետության համար: Դարաշրջանի հիմնահարցերը լուծվում են ոչ թե ճառերով և մեծամասնության քվեարկությամբ, դա 1848 և 1849 թթ. մեծագույն սխալն էր, այլ երկաթով և արյամբ:

Հարց Ա

Ի՞նչ գիտեք ելույթի հեղինակի մասին, ո՞րն է նրա ելույթի նպատակը: Ինչի՞ էր ուզում հասնել հեղինակը այս ելույթով:

Ելույթի հեղինակը խոշոր քաղաքական գործիչ և հմուտ դիվանագետ, Պրուսիայի կանցլեր (վարչապետ) Օտտո Բիսմարկն է (1815-1898 թթ.), որը Գերմանիայի միավորումից հետո դարձավ Գերմանիայի վարչապետ: Ելույթը տեղի է ունեցել 1862 թ. սեպտեմբերի 30-ին պրուսական խորհրդարանում: Նրա ելույթի նպատակը երևում է հետևյալ տողերում, այն է՝ «մենք չափազանց տաքարյուն ենք, նախընտրել ենք կրել մի զրահ, որը շատ մեծ է մեր փոքր մարմնի համար, բայց այժմ մենք պետք է օգտագործենք այն» և «Պրուսիան պետք է կենտրոնացնի իր ուժերը՝ պատրաստվելով հարմար առիթի, որը մի քանի անգամ արդեն անտեսվել է»: Հայտնի է, որ 19-րդ դարի երկրորդ կեսին Գերմանիան քաղաքականապես մասնատված էր: Այստեղ կային երկու տասնյակից ավել մեծ ու փոքր պետություններ, որոնցից մեկն էլ Պրուսիան էր: Գերմանիայի միավորումը այս դարաշրջանում դարձել էր անհրաժեշտություն: Բիսմարկը ի դեմս Պրուսիայի տեսնում էր այն ուժը, որը կենտրոնացնելով իր ուժերը, պետք է ստանձներ Գերմանիայի միավորման գործընթացը: Եվ այս ելույթը ուղերձ է խորհրդարանին ՝համոզելու, որ թեև այս գործը բավականին դժվար է և «շատ մեծ է մեր փոքր մարմնի համար», այդուամենայնիվ գործելու ժամանակն է, մանավանդ որ ճառերին ու քվեարկությանը թողնված գերմանական Ազգային ժողովը ցրվել էր՝ առանց միավորման խնդրին շոշափելի լուծում տալու:

©«Այբ» ավագ դպրոց

Հարց Բ

Օգտագործելով աղբյուրի տեղեկությունները և ձեր գիտելիքները՝ բացատրեք, թե ի՞նչ ծրագիր նա ուներ Գերմանիայի ապագայի վերաբերյալ: Արդյո՞ք նրան հաջողվեց իրականացնել այդ ծրագիրը: Փաստերով հիմնավորեք ձեր պատասխանը:

Վիեննայի վեհաժողովի որոշմամբ Գերմանիան մնացել էր պառակտված, իսկ 1848–1849 թթ. Գերմանիայում ծավալված հեղափոխությունը, որը փորձեց Գերմանիայի միավորման հարցը լուծել «ճառերով և մեծամասնության քվեարկությամբ», ձախողեց: Հեղափոխության արդյունքում Ֆրանկֆուրտ քաղաքում հրավիրվել էր Ազգային Ժողով, որը համագերմանական սահմանադրություն ընդունեց: Սակայն հետադիմական ուժերը համախմբեցին և հաղթեցին, իսկ համագերմանական Ազգային Ժողովը ցրվեց: Բիսմարկը կարծում էր, որ Գերմանիան պետք է միավորվի ***« երկաթով և արյամբ», այսինքն՝ պատերազմով:*** *Նպատակին հասնելու համար Բիսմարկը ծրագրել էր ասպարեզից հեռացնել հակառակորդներ Ավստրիային և Ֆրանսիային: Նախ՝ Պրուսիան 1866 թ. պատերազմի մեջ մտավ ընդդեմ Ավստրիայի և հաղթեց նրան: Բիսմարկը ստեղծեց Հյուսիսգերմանական միությունը՝ բաղկացած 22 պետությունից: Դա Գերմանիայի փաստացի վերամիավորումն էր: Ապա՝ 1870–1871 թթ. ֆրանս–պրուսական պատերազմում պրուսական բանակը ջախջախիչ հաղթանակ տարավ: Կնքված հաշտությամբ Ֆրանսիան ճանաչեց Գերմանիայի վերամիավորումը և վճարեց մեծ ռազմատուգանք: 1871 թ. հունվարի 18–ին Փարիզից ոչ հեռու գտնվող Վերսալի դղյակում հանդիսավորությամբ հռչակվեց Գերմանական տերության ստեղծումը: Այսպիսով՝ Բիսմարկը հասավ իր նպատակին:*

Առաջադրանք 5 (7 միավոր)

Աղբյուր 1

Ստորև տրված պարբերությունը հատված է հեղինակավոր հասարակագետ, փիլիսոփայության պրոֆեսոր Փիթեր Բոետկեյի «Ինչու՞ Վերակառուցումը ձախողվեց», 1992թ. աշխատությունից:

Գորբաչովյան Վերակառուցման կամ «*Պերեստրոյկայի*» քաղաքականությունն իբրև տնտեսության վերակազմակերպման ծրագիր դատապարտված էր լիակատար ձախողման: Հրապարակայնության կամ «*Գլաստնոստի*» քաղաքականությունը դարձավ այնպիսի քաղաքական և ազգային անջատողական շարժումների պատճառ, ինչպիսին կոմունիստական իշխանությունը չէր տեսել 74 տարիների ընթացքում: Կառավարման 6 տարիների ընթացքում Գորբաչովը ներկայացրեց ԽՍՀՄ տնտեսության վերակառուցման առնվազն 10 ծրագիր, սակայն դրանցից և ոչ մեկը չիրագործվեց:

©«Այբ» ավագ դպրոց

Աղբյուր 2

Ստորև ներկայացված ծաղրանկարը տպագրվել է «The Waterbury Republican», թերթում 1991 թվականին: Հեղինակ՝ Էդմունդ Վոլթման: Նկարում ԽՍՀՄ վերջին առաջնորդ Միխայիլ Գորբաչովն է՝ առջևում խորհրդային Միությունը խորհրդանշող «Մուրճի և Մանգաղի» խարխլված պատկերը:



Հարց Ա

Ի՞նչ գործընթացի մասին է խոսում հեղինակը: Ինչպե՞ս և ե՞րբ ավարտվեց այդ գործընթացը:

Հեղինակը խոսում է ժամանակի երկու գերտերություններից մեկի՝ ԽՍՀՄ փլուզման գործընթացի այն շրջափուլի մասին, երբ Կոմունիստական կուսակցության առաջնորդությունը ստանձնել էր Միխայիլ Գորբաչովը: Երբ Միխայիլ Գորբաչովը 1985 թվականին եկավ իշխանության, նա ստացել էր քաղաքական և տնտեսական խառնաշփոթ ժառանգություն: ԽՍՀՄ-ը կործանումից փրկելու համար Գորբաչովը փորձում էր դուրս բերել համակարգը քաղաքական և տնտեսական ճգնաժամից, որի լուծումը նա տեսնում էր տնտեսության վերակառուցման, հասարակության ժողովրդավարացման, նոր տեխնոլոգիաների ներդրման և աշխարհի հետ դիվանագիտական հարաբերությունների նոր ձևաչափի մշակման մեջ: Սակայն այդ գործընթացները ուշացած էին փտած համակարգի համար, և արդյունքները երկար սպասեցնել չտվեցին. 1991 թ. Դեկտեմբերի 26 ԽՍՀՄ-ն իբրև քաղաքական կառույց դադարեց գոյություն ունենալ:

©«Այբ» ավագ դպրոց

Հարց Բ

Ի՞նչ դիրքորոշում ունի ծաղրանկարի հեղինակը Միխայիլ Գորբաչովի քաղաքական դերակատարության և ԽՍՀՄ փլուզման գործընթացի վերաբերյալ: Համաձայն եք արդյոք ծաղրանկարում ներկայացված դիրքորոշման հետ: Բացատրե՛ք ձեր պատասխանը՝ հիմնավորելով աղբյուրների տվյալներով և ձեր գիտելիքներով:

Ամերիկյան թերթում տպագրված ծաղրանկարը ներկայացնում է ԽՍՀՄ-ի ճգնաժամային իրադրությունը, երբ խորհրդային համակարգը կանգնած էր բազմաթիվ խնդիրների և մարտահրավերների առաջ, որոնց պատասխանները և լուծումները պետք է մշակեր գործող կոմունիստական իշխանությունը: Ծաղրանկարում պատկերված անկարող և խեղճացած մարդը խորհրդային համակարգի առաջնորդը՝ Մ. Գորբաչովն է, ով ժառանգություն է ստացել քայքայված և խարխլված պետություն: Գիտենք, որ ԽՍՀՄ խորհրդանշող առանցքային խորհրդանիշերը էին «մուրճը և մանգաղը», որոնք ծաղրանկարում պատկերված են փշրված և կազմաքանդված վիճակում: Այն խորհրդանշում է, որ ԽՍՀՄ-ն արդեն ճգնաժամային վիճակում էր, երբ իշխանությունը ստանձնում էր Մ. Գորբաչովը:

Փիթեր Բոետկեյի աշխատության հատվածում առկա տեղեկությունը վկայում է, որ չնայած Գորբաչովը ժառանգել էր, խնդիրներով լի պետություն, նա այնուամենայնիվ փորձում էր փրկել ԽՍՀՄ-ը կործանումից, որի համար առաջադրել էր շուրջ 10 ծրագիր այդ թվում Վերակառուցման կամ «*Պերեստրոյկայի*» *և* Հրապարակայնության կամ «*Գլաստնոստի*» քաղաքականությունները: Դրանք սակայն ոչ միայն արդյունք չտվեցին, այլ նաև պատճառ հանդիսացան այլ շարժումների, ինչպիսիք էին քաղաքական կամ ազգային անջատողական շարժումները: ԽՍՀՄ համակարգի անկենսունակության և գորբաչովյան վերակառուցման ծրագրերի անկարողության արդյունքում 1991 թ. ԽՍՀՄ դադարեց գոյություն ունենալ:

Պատասխանի երկրորդ մասը կախված է աշակերտի անհատական կարծիքից և գնահատվելու է՝ ըստ հիմնավորվածության աստիճանի:

©«Այբ» ավագ դպրոց